ՀՀ ՏԿԵՆ ՋՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵ
«ՋՐԱՌ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ք.Երևան 0010, Վարդանանց փակուղի 8, (6-րդ հարկ), հեռ.՝ 012 74-00-77, էլ. փոստ sevan_hr.axo@mail.ru

N 478
«18» 05 2021թ.

ք. Երևան

«ՀԱՌ» ՍՊԸ-ի տնօրեն
պրն. Արտակ Հովակիմյանին

ԾԱՆՈՒՑՈՒՄ
(պայմանագիրը միակողմանի լուծելու մասին)

ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեի «Ջրառ» ՓԲԸ-ի և «ՀԱՌ» ՍՊԸ-ի միջև 26.03.2021 թվականին էլեկտրոնային եղանակով իրականացվող աշխատանքների գնման շրջանակներում կնքվել է պետության կարիքների համար կապալային աշխատանքների կատարման պետական գնման ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԳՀԱՇՁԲ-21/10 պայմանագիրը:

Պայմանագրի 1.3 կետով, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող 30.03.2021 թվականին կնքված համաձայնագրին կից օրացույցային գրաֆիկով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետ է սահմանվել 02.04.2021 թվականը:

Պայմանագրի 3.1.4 կետի ա) ենթակետի համաձայն Պատվիրատուն միակողմանի լուծում է պայմանագիրը եթե կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար:

Հետևաբար, հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ՀԱՌ» ՍՊԸ-ի կողմից խախտվել են պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ծավալները և ժամկետը, «Ջրառ» ՓԲԸ-ն մասամբ է ընդունում 26.03.2021 թվականին կնքված ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԳՀԱՇՁԲ-21/10 պայմանագրով նախատեսված և կատարված աշխատանքները, իսկ մնացած մասով միակողմանի հրաժարվում է պայմանագրից՝ համապատասխանաբար այն համարելով լուծված:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ համաձայն պայմանագրի կատարման ապահովման և որակավորման ապահովման տուժանքների մասին համաձայնագրերի 1.6 և 1.4 կետերի՝ համաձայնագրերը և կից վճարման պահանջագրերը կներկայացվեն Ձեր Ընկերության սպասարկող բանկ՝ պայմանագրի և որակավորման ապահովման գումարները գանձելու նպատակով և կնախաձեռնվի «ՀԱՌ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ:

Ծանոթություն՝ ՀՀ Կառավարության 526 որոշման 33-րդ կետի 16-րդ ենթակետի համաձայն Պատվիրատուն պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՏՆՕՐԵՆ՝ Ա.ԱԲԳԱՐՅԱՆ